ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/09

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ Ա/Ձ Գրիգոր Այվազյանի ներկայացուցիչ՝

Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 19.04.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6422-2019 գրությամբ Ա/Ձ Գրիգոր Այվազյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 04.03.2019թ. թիվ ԴՎԱ/839 գրության հիման վրա, 18.04.2019թ. թիվ 26/26-1/6422-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Գրիգոր Այվազյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. Ա/Ձ Գրիգոր Այվազյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Ա/Ձ Գրիգոր Այվազյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 26.04.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից 2018թ. ապրիլի 11-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 33-րդ չափաբաժին «փայտե տակդիր»-ների մատակարարումը նախատեսվել է 2-րդ եռամսյակում:

2018թ. հունիսի 29-ին Ա/Ձ Գրիգոր Այվազյանի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կնքվել է «Փայտե տակդիր»-ների ձեռքբերման «ԳՀԱՊՁԲ-7/26-7» ծածկագրով պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որով 33-րդ չափաբաժին «փայտե տակդիր»-ների մատակարարումը նախատեսվել է 2018թ. հուլիսին:

Այնուհետև, Պայմանագրի գնման ժամանակացույցի փոփոխության արդյունքում 33-րդ չափաբաժին «փայտե տակդիր»-ների մատակարարումը նախատեսվել է է մինչև 2018թ. օգոստոսի 30-ը:

www.gnumner.am համացանցային կայքում 28.02.2019թ. հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կնքված՝ «ԳՀԱՊՁԲ-7/26-7» ծածկագրով պայմանագիր ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 27.02.2019թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի բ) ենթակետի ուժով (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Իսկ նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը գնման առարկայի հատկանիշներ, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններն են:

Այսպիսով, ՀՀ ՊՆ-ի կողմից «ԳՀԱՊՁԲ-7/26-7» ծածկագրով «փայտե տակդիր»-ների ձեռքբերման գնման պայմանագրում ՀՀ ՊՆ-ի կողմից կատարվել են գնման առարկայի բնութագիր կազմող /տվյալ դեպքում ձեռքբերման պայման՝ ի դեմս գնման ժամանակացույցի/ այնպիսի փոփոխություններ, որոնք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անթույլատրելի են և նման փոփոխությամբ պայմանագիր կնքվել չէր կարող:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց համաձայն՝ 33-րդ չափաբաժին «փայտե տակդիր»-ների մատակարարումը նախատեսվել է 2-րդ եռամսյակում /2-րդ եռամսյակը ավարտվում է հունիսին/:

Սակայն արդեն «ԳՀԱՊՁԲ-7/26-7» ծածկագրով պայմանագիրը կնքվել է 29.06.2018թ. և տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «փայտե տակդիր»-ների մատակարարումը փոխվել է և նախատեսվել է 2018թ. հուլիս:

«ԳՀԱՊՁԲ-7/26-7» ծածկագրով փոփոխված պայմանագիրը կնքվել է 31.07.2018թ. և տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «փայտե տակդիր»-ների մատակարարումը փոխվել է և նախատեսվել է մինչև 2018թ. օգոստոսի 30-ը:

Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության և Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի միջև 29.06.2018թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-7/26-7» ծածկագրով «փայտե տակդիր»-ների ձեռքբերման գնման պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին անհամապատասխան (հակասում է օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասին), իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի պահանջներին

չհամապատասխանող գործարքն անվավեր է, ուստի և «ԳՀԱՊՁԲ-7/26-7» ծածկագրով «փայտե տակդիր»-ների ձեռքբերման գնման պայմանագիրը օրենգրքի 305-րդ հոդվածի ուժով՝ անվավեր է: Միևնույն ժամանակ, քանի որ «ԳՀԱՊՁԲ-7/26-7» ծածկագրով «փայտե տակդիր»-ների ձեռքբերման գնման պայմանագիրը ՀՀ քաղ. օր-ի 305-րդ հոդվածի ուժով՝ անվավեր է, ուստի և ՀՀ քաղ. օր-ի 304-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերոհիշյալ անվավեր գործարքը չի կարող հանգեցնել իրավաբանական հետևանքների, այդ թվում նաև ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ԳՀԱՊՁԲ-7/26-7» ծածկագրով անվավեր պայմանագրի միակողմանի լուծման հիմքով Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու հետևանքի:

Միևնույն ժամանակ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը /ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը/ 27.11.2017թ. կայացրած թիվ ՍՑ-ԷՍ-2017/63 և 19.12.2017թ. կայացրած թիվ ՍՑ-ԷՍ-2017/71 որոշումներով ՀՀ ՊՆ-ի կողմից պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ի՝ գնման ժամանակացույցի, փոփոխումը և նոր ժամանակացույցի սահմանումը որակել է որպես գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտում, և վերոհիշյալ ուժով «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն և Ֆ/Ա Իշխան Միրզոյանը չեն ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Նույն փաստական հանգամանքների շրջանակներում է քննվել նաև ՍՑ-ԷՍ-2017/65 ընթացակարգը, որի վերաբերյալ կայացված որոշմամբ՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը /ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը/ՀՀ ՊՆ-ի կողմից պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ի՝ գնման ժամանակացույցի, փոփոխումը և նոր ժամանակացույցի սահմանումը որակել է որպես գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտում, և վերոհիշյալ ուժով «Զիպեռ» ՍՊԸ-ն չի ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Մասնակիցը խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը, փաստական հանգամանքները և Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և

վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/09 ընթացակարգի շրջանակներում 26.04.2019թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարությանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.03.2019թ. թիվ ԴՎԱ/839 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի միջև կնքված՝ «ԳՀԱՊՁԲ-7/26-7» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ 2019թ. փետրվարի 26-ին միակողմանի մասնակի լուծել է «ԳՀԱՊՁԲ-7/26-7» պայմանագիրը:

Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ վերոնշյալ պայամանգրի լուծման վերաբերյալ գրությունը 28.02.2019թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/09 ընթացակարգի շրջանակներում 26.04.2019թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/09 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

ՍՑ-ՆԳ-2019/09 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Գրիգոր Այվազյանի միջև 29.06.2018թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-7/26-7» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիրը, որի համաձայն Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի թիվ 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրով-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը:

2. Ա/Ձ Գրիգոր Այվազյանին ուղղված 27.02.2019թ. թիվ ԴՎԱ/771 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջը, 26.02.2019թ. միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6422-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 04.03.2019թ. թիվ ԴՎԱ/839 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Գրիգոր Այվազյանի միջև 29.06.2018թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-7/26-7» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր, որի համաձայն Ա/Ձ Գրիգոր Այվազյանը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում ՀՀ պատշպանության նախարարությանը մատակարարել 15 900 000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 3000 հատ «փայտե տակդիր» ապրանքատեսակը:

Պայմանագրի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, փայտե տակդիրների մատակարարման ժամկետը նախատեսվել է 2018թ. հուլիս ամիսը:

Կողմերի միջև 31.07.2018թ. կնքվել է Պայմանագրի թիվ 1 փոփոխությունը, որով նախատեսվել է Ապրանքի մատակարարման ժամկետը սահմանել մինչև 30.08.2018թ.:

Ա/Ձ Գրիգոր Այվազյանին ուղղված 27.02.2019թ. թիվ ԴՎԱ/771 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ կողմերի միջև 29.06.2018թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-7/26-7» ծածկագրվով պայմանագրի շրջանակներում Ա/Ձ Գրիգոր Այվազյանը 2018թ. օգոստոս ամսին պետք է մատակարարեր 3000 հատ փայտե տակդիր, որից 872 հատը 26.12.2018թ. դրությամբ չի մատակարարվել:

Նույն գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները միակողմանի մասնակի (872 հատ փայտե տակդիրի մասով) 26.02.2019թ. լուծել է Պայմանագիրը:

Այսպիսով՝ Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7-րդ կետի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ Պայմանագրի համաձայն Ա/Ձ Գրիգոր Այվազյանը պարտավորվել է մինչև 2018թ. օգոստոսի 30-ը ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել 3000 հատ փայտե տակդիր:

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի:***

Արձանագրում եմ, որ Ա/Ձ Գրիգոր Այվազյան կողմից ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի, քանի որ Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում չեն մատակարարվել Պայմանագրով նախատեսված ապրանքի խմբաքանակից 872 հատ փայտե տակդիր, որի հետևանքով Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ն թույլ է տվել Պայմանագրի էական խախտում:

Գտնում եմ, որ Ա/Ձ Գրիգոր Այվազյանը թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերում է Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից ներկայացված այն պնդմանը, որ 29.06.2018թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-7/26-7» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիրն անվավեր է, քանի որ այն կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտմամբ, ուստի որևէ իրավաբանական հետևանք չի առաջացնում, հայտնում եմ, որ՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով ***դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):***

Իսկ նույն օրենսգրքի 305-րդ հոդվածը սահմանում է, որ ***օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:***

Տվյալ դեպքում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքը սահմանում է պայմանագիրը առոչինչ լինելու միայն մեկ դեպք՝ մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց

պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման պայմանագիր կնքելը: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պայմանագիրը կարող է անվավեր համարվել նույն օրենսգրքով սահմանված հիմքերով ***դատարանի կողմից*** այն այդպիսին ճանաչելու ուժով, ուստի սույն գործի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն գործում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում և ուսումնասիրում է արդեն իսկ կնքված պայմանագրի շրջանակներում Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման հարցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6422-2019 գրությամբ Ա/Ձ Գրիգոր Այվազյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Գրիգոր Այվազյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՀՀ ՀՀ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**